Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի ԹԻՎ ԹԻՎ 42-Ն, 43-Ն, 44-Ա, 45-Ն ԵՎ 48-Ա-54-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ թիվ 42-Ն, 44-Ա և 52-Ա որոշումների վերնագրերն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջին, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտի վերնագրում բերվում է միայն փոփոխվող իրավական ակտի կրճատ անվանումը:

Թիվ 42-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում նշված «թիվը» բառից հետո անհրաժեշտ է գրառել «և բառերը փոխարինել» բառերը:

Թիվ 43-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 12-րդ կետում նշված գրանցամատյանների Չև 1-ը, Չև 2-ը, Չև 3-ը և Չև 4-ը կցված չեն:

Թիվ 44-Ա որոշման 1-ին կետում կատարված փոփոխությունը թերի է: Անասնաբույժի փոփոխված «2.5» հաստիքային միավորի համար նախատեսված աշխատավարձի չափի վերաբերյալ որևէ գրառում կատարված չէ: Անհրաժեշտ է համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի թիվ 10-Ա որոշման 3-րդ կետով հաստատված N 2 հավելվածի 6-րդ կետի 3-րդ ենթակետում «Անասնաբույժ» տողի «Աշխատավարձի չափը» սյունակում նշված «300000» թիվը փոխարինել «375000» թվով»: Բացի այդ, որոշման 2-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջին, համաձայն որի՝ անհատական իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Թիվ 45-Ն որոշումը նորմատիվ բնույթի դրույթներ չի պարունակում: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի «Ն» (նորմատիվ) տառով նշում կատարելու անհրաժեշտություն չկա:

Որոշման նախաբանում «դրույթներով» բառից հետո գրառված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին» բառերը հանել:

Թիվ 48-Ա որոշման 1-ին կետում անհրաժեշտ էր գրառել վարձակալության իրավունքով տրամադրման ժամանակահատվածը: Բացի այդ, որոշման 3-րդ կետով անհրաժեշտ էր վարձակալության չափը սահմանել կոնկրետ ժամանակահատվածի համար:

Թիվ թիվ 49-Ա և 50-Ա որոշումների 1-ին կետերում վարձակալության հանձման ժամանակահատվածը սխալ է հաշվարկված:

Թիվ 51-Ա որոշման նախաբանում հղումը պետք է կատարվեր «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի ոչ թե 11-րդ կետին, այլ՝ մասին, իսկ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի N 22-Ն որոշման ոչ թե 2-րդ հավելվածի, այլ՝ որոշման 2-րդ կետով սահմանված հավելվածի 3-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթներին:

Որոշմամբ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2022 թվականի բյուջեի սոցիալական արտոնություններ /այլ դասերին չպատկանող/ բաժնում նախատեսված գումարից Սմբատ Սամվելի Սոնայանին հատկացվել է 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ դրամական աջակցություն, սակայն վերջինս չի հանդիսանում ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի բնակիչ: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքի բնակիչ է այն անձը, որը հաշվառված է տվյալ համայնքի բնակչության ռեգիստրում: Իսկ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի N 22-Ն որոշման 2-րդ կետով սահմանված հավելվածի 16-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված է, որ աջակցությունից օգտվելու նպատակով համայնքի ղեկավարին կարող են դիմել համայնքի բնակիչները:

Թիվ 53-Ա որոշման վերնագրում և բովանդակության մեջ «հաղորդումը» բառից առաջ գրառել «համայնքի ղեկավարի» բառերը, իսկ բովանդակության մեջ «համայնքի» բառից հետո գրառված «ղեկավարի» բառը հանել:

Որոշմանը կից ներկայացված բյուջեի 1-ին եռամսյակի կատարման վերաբերյալ հաղորդումն անհրաժեշտ էր ներկայացնել որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածի տեսքով: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 9-րդ մասի՝ նորմատիվ իրավական ակտով հաստատվող կանոնները, կանոնադրությունները, կարգերը, ցանկերը, աղյուսակները և այլն ամրագրվում են (կամ ձևակերպվում են) նորմատիվ իրավական ակտի անբաժանելի մաս համարվող հավելվածների ձևով:

Թիվ 54-Ա որոշումը չի համապատասխանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթին:

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
18.05.2022թ.